# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<16>> հուլիսի 2026թ. N ՄՈ/442 -Ա

ք. Արմավիր

**«ԱՄԲԵՐԴԻ Հ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԶՈՀՐԱԲ ՄԱՂԱՔՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Զոհրաբ Մաղաքյանի 2026 թվականի հուլիսի 14-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Զոհրաբ Մաղաքյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2026 թվականի հուլիսի 23-ից օգոստոսի 26-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Զոհրաբ Մաղաքյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Վանիկ Խաչատրյանին:

3. «Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Վանիկ Խաչատրյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 23-ից օգոստոսի 26-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Զոհրաբ Մաղաքյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 27-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**